

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ԶՈՒԳԱԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Պրոֆ. Գ. Բ. ԶԱՀՈՒՅԱՆ

§ 1. Խեթա-լուվական լեզուներ առելով հասկանում են առաջին հերթին խեթերենը (հեթիթերենը), լուվերենը, պալայերենը և հիերոգլիֆյան խեթերենը (հիերոգլիֆյան լուվերենը), որոնցից առաջին երեքը հայտնի են մ. թ. ա. XVIII—XIII դդ. փոքրասիական բևեռագիր արձանագրություններից, վերջինը՝ մ. թ. ա. XIV—VIII դդ. հիերոգլիֆյան դանադան տեքստերից, որոնք հայտնաբերվել են Փոքր Ասիայում և Ասորիքում (Սիրիա)։ Խեթա-լուվական լեզվախմբին են հատկացվում նաև մ. թ. ա. I հազարամյակում հունական այբուբենի ձևափոխված տարատեսակներով գրի առնված մի շարք լեզուներ՝ լիկիերենը և միլիերենը (լիկիերեն B)¹ (մ. թ. ա. V—IV դդ.), լիդիերենը (մ. թ. ա. VII—II դդ.), կարիերենը (մ. թ. ա. VIII—IV դդ.)։ Այսպիսով, խեթա-լուվական լեզուները գրության տիպով և ժամանակագրական հաջորդականությամբ բաժանվում են երկու խմբի, որոնք պայմանականորեն կարելի է կոչել վաղ խեթա-լուվական և ուշ խեթա-լուվական լեզուներ։ Խեթա-լուվական լեզուները հայտնի են նաև «խեթական լեզուներ» և «հին անատոլիական հնդեվրոպական լեզուներ» անուններով։

Վերջին ժամանակներս փորձեր են արվում խեթա-լուվական լեզուները խմբավորելու ըստ ցեղակցական մերձավորության։ Տարբերում են երկու ենթախումբ՝ խեթական կամ խեթա-լիդիական (խեթերեն, պալայերեն, լիդիերեն, կարիերեն) և լուվական կամ լուվա-լիկիական (լուվերեն, հիերոգլիֆյան խեթերեն կամ հիերոգլիֆյան լուվերեն, լիկիերեն)։

Որոշ գիտնականներ ոչ միայն խոսում են էտրուսկերենի հնդեվրոպական ընդլսթի մասին, այլև մերձավոր կապեր որոնում նրա և խեթական ենթախմբի լեզուների միջև։ Դեռ ավելին. Վ. Գեորգիևը հանդես է եկել էտրուսկերենի՝ խեթերենի հետագա ուղղակի շառավիղը լինելու վարկածով², որ ընդունելություն չի գտել գիտական շրջաններում։

Տողերիս գրողը խեթա-լուվական լեզուների շարքին է դասում նաև հայասերենը, որ առայժմ հայտնի է միայն խեթական սեպագիր արձանագրություններում մ. թ. ա. XIV—XIII դդ. հիշատակված հատուկ անուններով (անձնանուններ, դիցանուններ, տեղանուններ)³։

¹ Վ. Գեորգիևը լիկիերենը համարում է երկու տարբեր լեզուների խառնուրդ, որոնցից մեկը խեթա-լուվական է, մյուսը մոտ է պելասգերենին. հմտ. В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, էջ 159—162։

² V. Georgiev, Hethitisch und Etruskisch, Sofia, 1962.

³ G. B. Jakhalian, The Hayaša Language and its Relation to the Indo-European Languages, „Archiv orientální“, 1961, № 3, էջ 333—405, վերամշակված տարբերակը՝ Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к ин.-ев. языкам, Ереван, 1964.

§ 2. Խեթա-լուվական բեկոագիր տեքստերը առաջին անգամ հայտնի են դարձել 1906—1912 թթ. Բողազքոյ կոչված վայրում (Անկարայից 150 կմ արևելք) Հ. Վինկլերի կատարած պեղումների հետևանքով: Հայտնագործվեց խեթական թագավորների գրադարանը՝ շուրջ 13000 կավե աղյուսներով: Հետագայում սրանց թիվը ավելացավ ևս 3000-ով:

Խեթերենի վերծանման և լեզվի բնույթի պարզաբանման պատիվը պատկանում է չեխ գիտնական Բ. Հրոզնուն, որ 1915 թ. նախնական հաղորդում է կատարում իր ուսումնասիրության արդյունքների մասին, իսկ երկու տարի անց հրատարակում է խեթերենին նվիրված մի ծավալուն աշխատություն⁴: Պարզվում է, որ խեթերենը հնդեվրոպական լեզու է, թեև նրա բառապաշարի մեջ մեծ չափի են հասնում ոչ հնդեվրոպական տարրերը: Այդ լեզուն կրողներին վերաորվող «խեթ» անվանումը իրականում պատկանում է խեթական պետության բնիկներին, որոնց լեզուն հնդեվրոպական չէ և արմատապես տարրերվում է հին անատոլիական հնդեվրոպական լեզուներից. խեթերը այդ լեզուն կոչում էին «խաթերեն» (hattili), իրենց լեզուն՝ «նեսերեն» (našili կամ nešumnili): Գիտական գրականության մեջ «խաթերենի» կողբին գործածվում է նաև «նախախեթերեն» անունը, որ պետք է անհաջող համարել:

Բեկոագիր տեքստերում, բացի խեթերենից, հայտնագործվեցին նաև երկու այլ հնդեվրոպական լեզուների՝ Լուվերենի և պալայերենի մնացորդներ: Դրանցից հատկապես առաջինի ուսումնասիրությունը այժմ մեծ առաջադիմություն է կատարել:

§ 3. Հիերոգլիֆյան խեթերենի տեքստերը հայտնի են դեռևս XIX դ. կեսերից, բայց դրանց ուսումնասիրությունը երկար ժամանակ որևէ դրական արդյունքի չէր հասնում: Առաջադիմություն կատարվում է միայն XX դ. 30-ական թվականներից, երբ գտնվում են վերծանման որոշակի ուղիներ: Հ. Բոսերտի կողմից 1947 թ. Կարաթեփեում հայտնաբերված երկլեզվյան արձանագրությունը ճշգրտում է նախորդ փորձերը և նպաստում հետադա մեկնաբանություններին:

§ 4. Տարբեր է եղել ուշ շրջանի խեթա-լուվական լեզուների տեքստերի բնթերցման ու մեկնաբանության նախադիմությունը: Նթե լիկիերենի ուսումնասիրությունը աստիճանական առաջադիմություն է կատարում XIX դարից սկսած, ապա լիդիերենի տեքստերի մեկնաբանությունը սկսվում է առաջին համաշխարհային պատերազմից հետո և կարճ ժամանակում զգալի արդյունքներ տալիս: Կարիական տեքստերը, չնայած նրանց վրա կատարված բազմամյա աշխատանքին, երկար ժամանակ գիտական ճշգրիտ մեկնաբանության չէին ենթարկվում. միայն վերջին ժամանակներս այդ բնագավառում խիստ կարևոր արդյունքներ ձևոր բերվեցին ռուս նրիտասարդ գիտնական Վ. Վ. Շևրոշկինի կողմից⁵:

§ 5. Հայերենի և խեթերենի փոխհարաբերության հարցը գիտնականների ուշադրությունը գրավել է դեռևս այն շրջանում, երբ խեթերենի գիտական ուսումնասիրության հիմքերը չէին դրվել, և չէին տարրերում բուն խեթերենը հիերոգլիֆյան խեթերենից: Այսպես, Պ. Ընսենը XIX դ. վերջերին իր «Խեթերը

⁴ B. Hrozný, Die Sprache der Hethiter, ihr Bau und Zugehörigkeit zum indogermanischen Sprachstamm, Leipzig, 1917.

⁵ Տե՛ս հատկապես В. В. Швровский. Исследование по дешифровке карийских надписей, Москва, 1965.

և հայերի աշխատության մեջ⁶ հայտնում է այն կարծիքը, թե խեթերը հայերի նախնիներն են: Ըստ Ընսենի՝ խեթերի անունը, որ այն ժամանակ հայտնի եզրիպատական, ակկադական և ուրարտական աղբյուրներում հանդես էր գալիս *hit, hate, hatti, hatti* ձևերով (Աստվածաշնչում՝ *hittim*), օրինաչափ կերպով հանգել է ռայ անվանը՝ հայերենի համար սովորական է>յ անցմամբ: Հիերոգլիֆյան նշանները համարելով խեթական (իմա՝ հայկական) մտքի ստեղծագործություն՝ Ընսենը դրանք հասուկ բնությունն այսօր է դարձնում. այդ նշանները նա բաժանում է երեք խմբի և փորձում որոշել դրանց արժեքը: Այս կապակցությամբ հարկ ենք համարում հիշատակել այն հաճախակի փորձերը, որոնց նպատակն է հայկական ձևագրերում պահպանված «իմաստունների նշանագրերը» («նշանագիրք իմաստնոց») կապել խեթական հիերոգլիֆների հետ: Հարցի վերջնական լուծումը թողնելով ապագային՝ ուշադրություն ենք հրավիրում երկու հանգամանքի վրա. առաջին՝ «իմաստնոց» նշանագրերի՝ Հ. Աճառյանի կողմից կատարված վերլուծությունը պարզել է, որ դրանք գերադանցապես ետին շրջանի սղագրական նշաններ, պատկերագրեր ու գաղափարագրեր են, և որ պատկերագրային ու գաղափարագրային արժեք հնարավոր է վերագրել միայն երեք տասնյակից ոչ ավելի նշանների՝ երկրորդ՝ մինչև այժմ կատարված զուգադրումները որևէ համոզիչ արդյունքի չեն հասցրել:

Ավելորդ չենք համարում նշել, որ խեթական բևեռագիր արձանագրությունների հայտնագործումից ու վերծանումից հետո էլ որոշ գիտնականներ (Հ. Տաշյան, Ի. Մ. Դյակոնով)⁸, մերժելով Ընսենի ընդհանուր սխալ տեսակետը, այնուամենայնիվ շարունակում են պաշտպանել նրա կարծիքը հայ անվան՝ *hate, nati* անունից ծագելու մասին:

§ 6. Եթե մի կողմ թողնենք հնդեվրոպական լեզուների, այլև հայերենի ու խեթերենի համեմատական քերականության և ստուգաբանության հարցերին նվիրված ընդհանուր բնույթի աշխատությունները, որոնց մեջ այս կամ այն չափով արժարժվում է հայ-խեթական լեզվական առնչությունների հարցը, ապա հարկ կլինի խոսել այն աշխատությունների մասին, որոնք նվիրված են հատկապես այդ հարցին: Խեթագիտության առաջին իսկ քայլերից սկսած հայ-խեթական լեզվական առնչությունների հարցը զբաղեցրել է շատ հետազոտողների, որոնց մեջ հատուկ հիշատակման արժանի են Ն. Մարտիրոսյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Տ. Շուլտհայսը:

⁶ P. Jensen, *Hittiter und Armenier*, Strassburg, 1898.

⁷ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 22—59.

⁸ Հ. Տաշյան, Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920: Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փոյուզացիները և հայերը, ՆՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 11 (ռուս. տարբերակը տե՛ս «Переднеазиатский сборник», Москва, 1961, էջ 333—368):

⁹ Ն. Մարտիրոսյան, Հայերենի հարաբերությունը հեթիտերենի հետ, «Հանդես ամսօրյա», 1924, № 9—10, էջ 453—459, և 1926, № 7—8, էջ 369—375: Նույնի Հայ լեզվի հնագույն պատմության մասին, «Հանդես ամսօրյա», 1925, № 8—9, էջ 532—545: Հ. Աճառյան, Նոր հրատարակություններ հեթիթների մասին, «Նորք», 1925, № 5—6, էջ 383—393: Նույնի Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940: Г. Капанцян, Chetto-armeniaca, Ереван, 1931: Նույնի Хеттские боги у армян, Ереван, 1940: Նույնի Հայերի և հայերենի գոյացման մասին, «Սովետական գրականություն», 1941, № 1, էջ 47—62: Նույնի К происхождению армянского языка, Ереван, 1946: Նույնի Хайаса—колыбель армян, Ереван, 1947: Նույնի Историко-лингвистические работы, Ереван, 1956: Նույնի Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961: T. Schultheiss, Hethitisch und Armenisch, «Zeitschrift für vergleichende Sprachforschung», B. 77, H. 3/4, 1961, էջ 219—234.

Այս բոլոր հետադոտողների ձեռք բերած արդյունքները կարևոր համարելով հանդերձ՝ չենք կարող չնշել, որ այնուամենայնիվ կարիք է զգացվում հարցի հանգամանալից և գիտության արդի նվաճումներին համապատասխանող քրե-նարկման:

1. Ն. Մարտիրոսյանը, լինելով այս բնագավառի նախակարասլետներից մեկը, շունի մեթոդի ճշգրտություն և հենվում է գերազանցապես արտաքին նմանությունների վրա: Նա հստակորեն չի տարբերակում ընդհանուր լեզվից ժառանգված զուգահեռները փոխառությամբ բացատրվող զուգահեռներին: Այսպես, խեթ. parku- — հայ. բարձր, խեթ. pəhhu- — հայ. հուր, խեթ. ŋenu- — հայ. ծունկ և այլն տիպի զուգահեռների հետ միասին նա առանց տարբերակման բերում է հայերենում ակնհայտորեն փոխառություն հանդիսացող զուգահեռներ՝ խեթ. ušk- «տեսնել» — հայ. ուշ-ի, խեթ. pai- — հայ. պահեմ, խեթ. ɣar- — հայ. վառ և այլն: Կան ակնհայտորեն սխալ զուգահեռումներ, ինչպես՝ խեթ. kərū «կանուխ» — հայ. զարուհ, որոնցից երկրորդը ծագում է հնդեվրոպական *u₂sr- նախածեղից:

2. Դ. Պափանցյանի համեմատությունները, բավականաչափ լրիվ լինելով հանդերձ, չեն հենվում որոշակի չափանիշների վրա: Դ. Պափանցյանը հետևողականորեն չի անցկացնում հնչյունական ստույգ օրենքներ սահմանելու սկզբունքը, ելնում է խեթերենի և հայերենի՝ «ասիանիկ» լեզուներ լինելու սխալ գաղափարից, հստակ տարբերակում չի դնում բնիկ բառերի և փոխառությունների միջև, խեթական բառերի իմաստը մեկնաբանելիս երբեմն թույլ է տալիս անհարկի ազատություն: Ընդհատ է, առանձին դեպքերում, հատկապես իր «Հայոց լեզվի պատմության» մեջ նա փորձում է սահմանադատել բնիկ բառերն ու փոխառությունները և նույնիսկ նշել փոխառությունների տարբեր տիպեր, բայց մեթոդի թերությունները հնարավորություն չեն տալիս հասնելու դրանց հետևողական տարբերակման:

3. Հ. Աճառյանի և Տ. Շուլտհայսի համեմատությունները ելնում են ճիշտ նախադրյալներից, բայց պակասավոր են: Առանձնապես պետք է նշել, որ Հ. Աճառյանի աշխատությունների լույս տեսնելուց հետո խեթագիտությունը հսկայական նվաճումներ է ունեցել, և որ Տ. Շուլտհայսի բոլոր եզրակացությունները հենվում են միայն Դ. Պափանցյանի տվյալների վրա:

4. Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ հետադոտողները սովորաբար բավարարվում են միայն խեթերենի տվյալներով՝ առանց դիմելու խեթա-լուվական լեզվախմբի մյուս լեզուներին:

Այսպիսով, հայերենի և խեթա-լուվական լեզուների փոխհարաբերության ուսումնասիրությունը շարունակում է մնալ համեմատական լեզվաբանության առաջնահերթ խնդիրներից մեկը: Ընդհանրացնել այդ բնագավառում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, դրանք ճշգրտել ու լրացնել խեթագիտության և հայագիտության վերջին շրջանի ձեռք բերած արդյունքներով, հստակ կերպով սահմանադատել բնիկ և փոխառյալ բառերը, օգտագործել խեթա-լուվական մյուս լեզուների տվյալները, — ահա այն հարցերը, որոնք դրված են մեր առջև և որոնց լուծմանը նպաստելուն է կոչված ներկա ուսումնասիրությունը: Հայերենի և խեթա-լուվական լեզուների քերականական առընչությունների հարցը սերտորեն կապված համարելով հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության ընդհանուր հարցերի հետ՝ մենք ներկա

ուսումնասիրության մեջ նկատի կունենանք միայն բառային ընդհանրությունները:

§ 7. Քանի որ և՛ հայերենը, և՛ խեթա-լուվական լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին՝ կաղմելով անկախ ճյուղեր, ուստի նրանց միջև գոյություն ունեցող բառային ընդհանրությունները կարող են լինել երկու տիպի՝ 1) ծագումնային (ցեղակցական) և 2) ոչ-ծագումնային (ոչ-ցեղակցական): Ոչ-ծագումնային ընդհանրություններն ընդգրկում են ա) փոխառությունները լայն իմաստով՝ հայերենի փոխառությունները խեթա-լուվական լեզուներից և հայերենի ու խեթա-լուվական լեզուների փոխառությունները այլ լեզուներից, բ) ենթաշերտային (սուբստրատային) ազդեցության արդյունք հանդիսացող բառերն ու բառաձևերը (փոքրասիական բնիկներից խեթա-լուվական լեզուներին ու հայերենին անցած բառերը և Հայաստանի բնիկներից հայերենին անցած բառերը՝ այդ բնիկների ձուլման և էթնիկական փոխազդեցության պրոցեսում): Կարելի է ասել, որ ծագումնային և ոչ-ծագումնային ընդհանրությունների տարբերակման հարցը համեմատական լեզվաբանության զարգացման արդի էտապում ընդհանուր տոմամբ կարող է գոհացուցիչ լուծում ստանալ: Դժվարությունները կապված են հայերենի և խեթա-լուվական լեզուների պատմական փոխհարաբերության ընդհանուր բարդության և խեթա-լուվական լեզուների հնչույթային համակարգի իրական բնույթի՝ դեռևս լիովին պարզ չլինելու հետ: Այսպիսի դեպքերը կնշվեն ստորև՝ կոնկրետ քննարկման ընթացքում¹⁰:

Հայերենի և խեթա-լուվական լեզուների ոչ-ծագումնային ընդհանրությունների քննությունը թողնելով առանձին հոդվածի՝ այստեղ կգրադվենք ծագումնային ընդհանրությունների հարցով:

§ 8. Հայերենի և խեթա-լուվական լեզուների ծագումնային ընդհանրությունների քննության ժամանակ բնականաբար որպես ելակետ և էտալոն պետք է ծառային հնդեվրոպական հիմնալեզվի վերականգնված նախաձևերը: Հնդեվրոպական հիմնալեզուն բնորոշվում է հնչույթների հետևյալ տիպերով (կասկածելի վերականգնումները նշանակում ենք հարցականով). 1) բաղաձայններ՝ ա) պայթականներ՝ bh, dh, gⁿ, gh, g^uh. b(?), d, g, g^h, p, t, k', k, k^u. ph(?), th(?), k'h(?), kh(?), k^uh(?). բ) շփականներ՝ s, þ(?), d(?). գ) ձայնորդներ՝ r, l, m, n, ɹ, u (վանկարար տարրերակներով՝ r. l. m, n, ɹ, u). 2) ձայնավորներ՝ ա) բուն ձայնավորներ՝ e, ē, o, ȳ, a, ā. բ) երկարաբառներ՝ ei, eu, oi, ou, ai, au և այլն:

Ելակետային հնչույթային այս համակարգի վերաբերյալ հարկավոր է իմանալ նաև հետևյալը.

1) Հնդեվրոպական լեզուները սովորաբար բաժանում են երկու խմբի՝ կենտումային և սատեմային. առաջին դեպքում քմայնացած ետնալեզվային-

¹⁰ Հետագա քննության ժամանակ խեթա-լուվական լեզուների համար հիմնական աղբյուրներ են ծառայելու հետևյալ աշխատությունները.

J. Friedrich, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952 (+ 1. Ergänzungsheft, 1957, 2. Ergänzungsheft, 1961). H. Kronasser, Vergleichende Laut- und Formenlehre des Hethitischen. Heidelberg, 1956. E. Laroche, Dictionnaire de la langue louvite, Paris, 1959. P. Meriggi, Hieroglyphisch-Hethitisches Glossar, 2. Aufl., Wiesbaden, 1962. R. Gusmani, Lydisches Wörterbuch, Heidelberg, 1964. B. B. Ш е в о р о ш к и н, Исследование по дешифровке карийских надписей, Москва, 1965 և ուրիշներ:

ների դիմաց (ց'ն, ց', կ', կ'ն) սովորաբար են ետևալեզվայիններ, երկրորդ դեպքում՝ առաջնալեզվային շփականներ, կիսաշփականներ և նույնիսկ պայթականներ. խեթա-լուվական լեզուները պատկանում են կենտումային խմբին, հայերենը՝ րատեմային խմբին (հմմտ. հ.-ե. *k'erd- > խեթ. kard- «սիրտ» և հ.-ե. *k'erd- > հայ. սիրտ). ձիշտ է, հիերոգլիֆյան խեթերենի մասին կարծիք է հայտնվել, որ այն սատեմային լեզու է, բայց հետազոտողները հակված են կամ որպես ապացույց բերվող սակավաթիվ բառերը համարել փոխառություններ, կամ հ.-ե. *k'-ի դիմաց հ-ի առկայությունը բացատրել որպես հաջորդ u-ի ազդեցության արդյունք (բոլոր բառերում s հնչույթը գտնվում է u-ից առաջ): Կենտումային լեզուներում, այսպիսով, գործում է ետևալեզվայինների k:k > հակադրությունը, սատեմային լեզուներում՝ k':k հակադրությունը:

2) Հնդեվրոպական հիմնալեզվում, ինչպես նշվում է վերջերս, ամենայն հավանականությամբ չի եղել շնչեղ խուլերի, որպես անկախ հնչույթների շարքը. պետք է կարծել, որ դրանք եղել են պարզ խուլերի դիրքային և ուժեղացված (էմֆատիկ) տարբերակներ, որոնք անկախ հնչույթների են վերածվել առանձին լեզվախմբերում: Այս է պատճառը, որ հ.-ե. շնչեղ խուլերի համար տարբեր լեզուներում որոշակի համապատասխանություններ չկան:

3) Այսպես կոչված կոկորդայինների հիպոթեզի կողմնակիցները առանձնացնում են հնդեվրոպական հիմնալեզվի զարգացման հնադույն շրջանի համար հատուկ կոկորդային տիպի հնչյուններ (մեկից մինչև հինգ), որոնք խեթերենում պահպանվել են որպես ի, իի, հայերենում՝ որպես հ, ընդ որում որոշակի համապատասխանություններ առկա են ոչ բոլոր դեպքերում:

§ 9. Հայերենի (տվյալ դեպքում հիմք է ընդունվում հայերենի դրի առնված հնադույն վիճակը՝ զբաբարը) հնչույթային համակարգը հնդեվրոպականի համեմատությամբ բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով, որոնք արդյունք են հայերենի՝ որպես անկախ լեզու կրած փոփոխությունների:

1) Հայերենի բաղաձայնական համակարգի համար ամենից առաջ բնորոշ է առաջին կոչված տեղաշարժը, այն է՝ հ.-ե. բաղաձայնների հիշյալ շարքերի մեկ աստիճան դեպի ձախ տեղափոխվելը՝ հ.-ե. bh, dh, gh (g'h) > հայ. բ, դ, գ. հ.-ե. b, d, g (g'h) > հայ. պ, տ, կ. հ.-ե. p, t, k (k'h) > հայ. փ, ք, ց: Հայերենի բաղաձայնական տեղաշարժը ունի մի շարք առանձնահատկություններ. ա) հ.-ե. p-ն վերածվում է ոչ թե փ-ի, ինչպես սպասելի էր, այլ փ-ի, որ ետևադրում է հնչույթային և հնչյունական հատուկ նախադրյալներ կամ ենթադրատային (սուբստրատային) ազդեցություն. ծ) այսպես կոչված շնչեղ խուլերը կրում են սովորական խուլերից տարբեր փոփոխություն՝ ph, th, kh (k'h) > փ, ք, խ. գ) հ.-ե. խուլ պայթականները՝ p, t, k (k'h) ետաջնորդային դիրքում փոխվում են ձայնեղների՝ բ, դ, գ, ընդ որում ոնգայիններից հետո երկրորդաբար տեղի է ունենում ձայնեղների և խուլերի շփում. զ) հ.-ե. sd, st, sk կապակցություններից առաջին երկուսում p-ն և t-ն տեղաշարժի շեն ենթարկվում, իսկ sk-ն (այլև sk'-ն, sk'h-ն) փոխվում են ց-ի. լ) հ.-ե. p-ն և t-ն բառամիջի տարբեր դիրքերում տալիս են լ և յ (միջձայնավորային դիրքում), լ (բաղաձայնից առաջ):

2) Հայերենի բաղաձայնական համակարգի համար բնորոշ են քմայնացած բաղաձայնների շփականացումն ու կիսաշփականացումը հետևյալ ձևով՝ հ.-ե. g'h, g', k' > ձ (բառամիջում՝ գ), ծ, ս. հ.-ե. gh (e-ից, i-ից, l-ից առաջ գտնված դիրքում), ք (e-ից, i-ից, l-ից առաջ գտնված դիրքում), կ (l-ից առաջ

դտնված դիրքում)>հայ. ջ (բառամիջում՝ ժ), և, չ. այլ կերպ ասած՝ հ.-ն. յմայնացած բաղաձայններից առաջանում են սուլական կիսաշփականներ ու շփականներ, հ.-ն. ոչ յմայնացած ետնալեզվայիններից՝ դրանց հետագա թմայնացման հետևանքով՝ շչական կիսաշփականներ և շփականներ¹¹, կիսաշփականներով կարող են առաջանալ նաև առաջնալեզվայինների թմայնացման հետևանքով (հմտտ. *dhi>հայ.-դ.)

3) Հ.-Բ. շփականները հայերենում ներկայացված են հետևյալ կերպ.
ա) Տ-ն հայերենում բառակազմում ներկայացված է որպես Ե, Ե կամ զոր, բառաձևերում որպես զոր, բառավերջում որպես Բ. բ) Հ.-Բ. ոչ-վանկարար (բաղաձայն) Դ, Լ, Մ, Ո, Լ, Ս ձայնորդները սովորաբար ներկայացված են որպես Բ, Դ (Ղ), Մ (Բառավերջում՝ Ե), Ն, Զ, Գ, Ընդ որում Հ.-Բ. ԴՏ կապակցությունը տալիս է հայ. Ռ կամ ԲՂ, ՏԴ կապակցություն՝ Ռ. գ) Հ.-Բ. վանկարար (ձայնավոր) Դ, Լ, ՄԵ, Ո, Լ, Ս ձայնորդները ներկայացված են որպես աբ, ալ (աղ), ամ (ան), աբ, Խ, ու:

4) Հ.-Ե. ձայնավորները և երկարաբառները հայերենում ներկայացված են հետևյալ կերպ. ա) հ.-Ե. կարճ Ե, Օ, Զ ձայնավորները ներկայացված են որ-դայեն Ե, ո, ա (ոնցնայեններից առաջ՝ ի, ու, ար), երկար Ե, Օ, Զ ձայնավորները՝ որպես ի, ու, ա. բ) հ.-Ե. երկարաբառների կրած մասնակի փոփոխությունն-րից նշելի են ei, oi>լ և eu, ou>ոյ աղետվածքները:

Տ 9. ինքնա-լուավական լեզուների հնչույթային առանձնահատկությունների նկարագրությունը կապված է որոշ զփարությունների հետ: Ամենից առաջ՝ եթե հայկական հույրը ներկայացված է միայն մեկ լեզվով, ապա ինքնա-լուավականը կապված է լեզուների մեկ ամբողջություն: Այս դեպքում կամ պետք է օգտվել այդ լեզուների համար վերականգնվող ընդհանուր նախաձևերից, կամ հիմք ընդունել լեզուներից մեկը, և մյուս լեզուների տվյալները բերել նրա հետ կապված: Փանի որ ինքնա-լուավական ընդհանուր նախաձևերի վերականգնումը առայժմ չի կարելի կատարել անհրաժեշտ լրիվությամբ ու նշգրտությամբ, մենք բնորոշում ենք երկրորդ ուղին և համեմատություն համար հիմք ընդունում խե-թերենը: Սակայն խեթերի հնչույթային համակարգի պատմություն մեզ համար լիովին պարզ չէ: Բնեռագրությունը, փոխ առնված և հարաբերյալված լինելով խեթերենին, անկատար ձևով է արտացոլում նրա հնչույթային համակարգը: անհրաժեշտ հետևողականություն չկա ձայնադրություն ու խույություն (եթե այդ հակադրությունն իրող գոյություն է ունեցել) կամ շնչեղություն ու ոչ-շնչեղություն նշանակելու հարցում: Եթե մենք տարբերակվում ե և Վ ձայնավորները, այլև չկա օ և Վ ձայնավորների տարբերակում: Լիովին պարզ չէ հ և Շ բաղա-ձայնների հնչումը (հնարավոր է, որ այդ նշանների տակ թաքնված լինեն տա-բեր տիպի հնչույթներ): Կան միևնույն բառերի տարբեր տիպի գրություններ և այլև, և այլև: Ժիշտ է, է. Ստորտեհանտը բաղաձայնների պարզ և կրկնակ գրու-թյունը բարձրում է դիտել որպես հնչույթային որոշակի հակադրության արտա-ցումը, բայց նախ՝ լիովին պարզ չէ այդ հակադրության իսկական բնույթը, երկրորդ՝ տարբերակումն: անց է կացվում միայն ոչ բառակազմային դիրքում, երրորդ՝ ստուգականության տվյալները այդ սկզբունքի կիրառման հետևողա-կանությունն օտուգ չեն տալիս, արտորդ՝ ումաք գրություն այդ տարբերություն

¹¹ Հայտնական այս օրենքը սահմանված է հնդիւնակի կողմից երա «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում, Երևան, 1967:

ները կապում են շեշտի դիրքի հետ՝ վերջին ժամանակներս տարբեր հետադարձություններ (Ա. Հոյբեկ, Հ. Միտելբերգեր, Թ. Գամկրելիձե) փորձում են ցույց տալ խեթերենի բաղաձայնական համակարգի տարբեր տեղաշարժեր։ Այսպես, Թ. Գամկրելիձեն, խոսելով բաղաձայնների խեթական տեղաշարժի մասին, այն համեմատում և տարբերում է հայկական և գերմանական տեղաշարժերից։ «Ենթերկով հնդեվրոպական բաղաձայնների հայկական և գերմանական տեղաշարժերից,—գրում է նա,—բաղաձայնների խեթական տեղաշարժի պրոցեսը կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. հ.-ե. խուլ պայթականներ՝ *p, *t, *k, *k^u տվել են համապատասխան շեշեղ խուլեր՝ ph, th, kh, kh^u, որոնք խեթական գրության մեջ արտահայտվել են տվյալ բաղաձայնին համապատասխանող նշանի կրկնությամբ¹². հ.-ե. ձայնեղ պայթականներ՝ (*b)¹³, *d, *g, *g^u փոխվել են խուլերի՝ (p), t, k, k^u, որոնք գրության մեջ արտահայտվում են համապատասխան բաղաձայնների պարզ գրությամբ (մեծ մասամբ պայթականների նշաններով). հ.-ե. շեշեղ-պայթականներ՝ *bh, *dh, *gu, *gu^u ապաշեշեղացման հետևանքով տվել են մաքուր ձայնեղ պայթականներ, որոնք իրենց հերթին փոխվել են խուլ պայթականների՝ այնպիսի պատճառների ազդեցության տակ, որոնք նույն տիպի են, ինչ հ.-ե. ձայնեղ պայթականների խուլերի փոխվելը պայմանավորող պատճառները»¹⁴։

1) Այսպիսով, հ.-ե. բոլոր չորս կարգի պայթականների դիմաց խեթերենը բառասկզբում ունի p (b), t (d), k (g), ku (gu), ընդ որում k-ի և k^u-ի դիմաց էրբեմն կարող են հանդես գալ խեթ. h-ն և hu-ն։ Բառամիջում, ինչպես նշվեց, կրկնակ և ոչ կրկնակ գրությունը դիտվում է որպես հնչույթային որոշակի հակադրություն (շեշեղների և ոչ-շեշեղների) արտացոլում։ Քանի որ խեթերենում կրկնակ բաղաձայնով բառ չի սկսվում, ուստի և հ.-ե. sp, st, sk կապակցությունները խեթերենում կարող են ներկայացվել išp, šip, išt, išk, šak, zak ձևերով, որոնք թերևս արտացոլում են հնչման որոշակի առանձնահատկություններ։ Հ.-ե. շրթնայնացված ետնալեզվայինները խեթերենում արտացոլված են որպես ku (gu)։ Քանի որ, ինչպես նշվել է, շեշեղ խուլերը հնդեվրոպական հիմնալեզվում առանձնակի հնչույթներ չեն եղել, ուստի և՛ խեթերենում և՛ հայերենում p, t, k-ի և ph, th, kh-ի տարբերակման որոշակի համապատասխանություն չկա։

2) Խեթերենում չկան քմայնացման հետ կապված այն բաղաձայն փոփոխությունները, որոնք նշվեցին վերևում։ Այդ կարգի փոփոխություններից նշելի են *di > ši և *ti > zi անցումները։

3) Հ.-ե. շփականները խեթերենում ավելի քիչ են փոխվել, քան հայերենում. ա) հ.-ե. s-ն ներկայացված է որպես š. հազվադեպ որպես z. բ) հ.-ե. ոչ վանկարար r, l, m, n, ɺ, u ձայնորդները ներկայացված են որպես r (բառասկզբում՝ որևէ նախահավելվածային ձայնավորով, ինչպես հայերենում), l, m, n, ɺ (?), u (hu, u, u?), ընդ որում ye-ն խեթերենում կարող է փոխվել u-ի. գ) հ.-ե. վանկարար r, l, m, n, ɺ, u ձայնորդները խեթերենում ներկայացված են որպես ar, al, a, an, ɺ, u։

¹² Հ.-ե. k-ն բառասկզբում որոշ դեպքերում փոխվել է շփական h-ի՝ *kh-ից։

¹³ Գրեթե անհնար է գտնել սկզբնային *b-ով հ.-ե. հավաստի ձևեր։ *B հնչույթը ամենայն հավանականությամբ հ.-ե. բաղաձայնների համակարգում չի ունեցել բացակայում էր։

¹⁴ Т. В. Гамкрелидзе, Передвижение согласных в хеттском (неситском) языке, „Переднеазиатский сборник“, Москва, 1961, էջ 252—253։

4) Հ.-հ. ձայնավորներն ու երկրորրառները խեթերենում ներկայացված են հետևյալ կերպ. ա) հ.-հ. կտրճ e, o, a ձայնավորների դիմաց առկա են e (a, i), a, a, երկար ē, ō, a ձայնավորների դիմաց՝ e, a, a կամ սրանց և ~~h~~-h² (h²-h) զուգորդումներ. բ) հ.-հ. ei, oi, ai երկրորրառները ներկայացված են որպես e, իսկ eu, au երկրորրառները՝ որպես u:

§ 10. Հնդեվրոպական, հայկական և խեթական հնչյունական համակարգերի փոխհարաբերությունը կորելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (բառամիջի դիրքը նշանակում ենք -y- -w- և այլն ձևով, բառավերջի դիրքը՝ -k^c, -n ձևով).

Հ.-հ.	Հայ.	Խեթ.	Հ.-հ.	Հայ.	Խեթ.
bh	b	p	r	ar	ar
dh	d	t	l	al, al	ai
g'h	j (-z-)	k	ṛ	am	a
gh	g (ġ)	k	ṛ	an	an
g ^u h	g (ġ)	ku	i	i	i
b	p	ṇ	i	i	i
d	t	t	u	u	u
g'	c	k	ū	u	u
g	k (č)	k	e	e	e (i,a)
g ^u	k (č)	ku	ē	i	e, eh(h)
p	h	p	o	o	a
t	tc (-y-, -w-)	t	ō	u	a, ah(h)
k'	s	k	a	a	a
k	k ^c (c)	k, ḫ	a	a	a, ah(h)
ḫ ^u	k ^c (č)	ku, ḫu	ei	ē	e
ph	p ^c	p	oi	ē	e
th	tc	t	ai	ai	e
k'h	ç	k	eu	oi	u
kh ¹	x	k, ḫ	ou	oi	u(?)
k ^u h	x	ku, ḫu	au	au	u(?)
s	h, y, - (-k ^c)	š, z	ə	a, h, —	a, ḫ, —
r	(e,a)r	r			
l	l, l	l			
m	m (-n)	mi			
n	n	n			
ḷ	ḷ	ḷ			
u	g (-w-, -v-)	u			

§ 11. Հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային զուգադիպումների մեջ առաջին հերթին պետք է նշել այն բառերն ու բառաձևերը, որոնց համար բնորոշ են կառուցվածքային մի շարք կարևոր ընդհանրություններ:

1) Բառակազմական (հիմքակազմական) մերձավորություն.

խեթ. parku- «բարձր» — հայ. բարձր, -ու¹⁵.

¹⁵ Հմմտ. В. Порциг. Членение индоевропейской языковой области, Москва, 1964, էջ 278.

2) Արմատների հերթադրության ձայնավորման մերձավորություն.

խեթ. *yeten-* (yatar «ջուր» բառի թեք հոլովների հիմքը, կրճատ դորժածությունը՝ *yit-*), լուվ. *und-* «ջուր» — հայ. *ղետ,-ոյ*¹⁶.

3) «Հավելվածային» նախածայնավորի առկայություն.

խեթ. *amm-* [uk «ես» զերանվան թեք հոլովների հիմքի զլխավոր տարրը՝ *ammuk* «ինձ (զիս)» (սնոր թագավորությունը շրջանում նաև «ես»), *ammēl* «իմ» *amimedaz(a)* «ինձնից»՝ *-mu* «ինձ», *-ma-*, *mi-* «իմ» (ստաց. զեր.) ձևերի կողքին], հիեր. խեթ. *amu* «ես» [-*mu* «ինձ», *am(i)a* «իմ» (ստաց. զեր.) ձևերի կողքին], լիդ. *amu*, լիկ. *ēmu* «ես, ինձ», *ēmi-* «իմ» (ստաց. զեր.) — հայ. իմ. (զ)իս (**eme-g'e*), ինձ (**eme-g'h-*).

հիեր. խեթ. *átamāi* «անուն» [խեթ. *laman* (**nāman-ից*՝ տարնամանությունը) ձևի կողքին] — հայ. *անուն,-ուան*¹⁷.

4) Նախահնչավորապական կոկորդայինների պահպանում բառասկզբնային դիրքում.

խեթ. *hanna-*, լիկ. *γnna* «տառ» [խեթ., պալ. *anna-*, լուվ. *anni-*, լիկ. *ēni-*, լիդ. *ēna-* «մայր» ձևերի կողքին] — հայ. *հան տառ*.

լուվ. *hau-*, հիեր. խեթ. *haua-* «ոչխար» — հայ. *հովի-ւ* (բոց. «ոչխար-ապահ»).

խեթ. *hink-* (*henk-*), *hik-* «հասցնել, մեկնել, մատուցել, բաժին հանել» (այլև *hink-*, *hik-* «ղլուխը խոնարհել, ակնարկել, խոնարհվել») — հայ. *ռասանեմ*.

խեթ. *huhha-*, հիեր. խեթ. *huha*, լիկ. *γuga-* «պապ» (այլև թերևս հայաս. *Huggana-*՝ անձնանուն՝ «պապ» նախնական իմաստից) — հայ. *հաւ պապ*.

Հաճախակի մատնանշվող խեթ. *huuant-* «հողմ, քամի» և հայ. *հով* գուրդահեղ կասկածելի է, որովհետև առաջինը համեմատում են լատ. *ventus*, գոթ. *winds* «հողմ, քամի» բառերի հետ, իսկ երկրորդը հոգի, ոգի դուղաձևերի հետ բխեցնում հ.-ե. **pou-* նախածեղից (հմտ. և հետլ՝ նույն **pou-* արմատից ածանցված **poua-* ձևից):

§ 12. Հայերենի և խեթա-լուվական լեզուների այլ կարգի զուգահեռները գերազանցապես հնդեվրոպական արմատների ընդհանրությամբ կապված բառաձևեր են, որոնք հաճախ տարբերվում են և՛ կազմությամբ, և՛ իմաստային զարգացմամբ:

Ստորև բերում ենք խեթա-լուվական լեզուների և հայերենի այս կարգի, ընդհանուր բառերն ու բաղադրամասերը՝ զրանք խմբավորելով ըստ հնդեվրոպական բաղադրանքների տիպերի արտացոլման: Այս դեպքում հեղինակը չի ձգտում լիակատար ընդգրկման՝ բացառելով իրարից խիստ հեռացած կազմությունները, այլև նկատի ունենալով, որ խեթա-լուվական լեզուների և հա-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Հմտ. В. В. Иванов, Хеттский язык, Москва, 1963, էջ 107: Այստեղ բերված խեթ. *adant* (*at-*, *et-* «ուտել» բայից կազմված զերբայական ձև) — հայ. *ատամն* զուգահեռը խեթերենի և հայերենի միջև մերձավոր կապ սահմանելու համար հիմք չի տալիս: Լիդ. *ēlam* բառը, որին հիեր. խեթ. *atamai-*ի նմանությունը վերագրվել է «անուն» իմաստը, այժմ մեկնում են որպես «սահմանում, կարգադրություն» և համեմատում հին հնդկ. *dhāman* «օրենք, կանոնադրություն» բառի հետ, հմտ. R. Gusmanl, Lydisches Wörterbuch, Heidelberg, 1964, էջ 108—109:

լերենի ստուգաբանության անընդհատ զարգացման պայմաններում այդպիսի լրիվության հնարավորությունն ընդհանրապես բացառվում է:

1) Հ.-հ. bh, dh, gh, g^uh.

լիդ. *brafra- (brafrsi-, brairli-) «ֆրատրիա(?)», պաշտամունքային միություն(?)», ևդրայրություն(?)» — հայ. եղբայր.

լիդ. bu- *«լինել» (bu-k «բայց», buv-aš) — հայ. բոյս, բոյն, բուն.

խեթ. (<լուվի?) arpa- «անբարենպաստություն, անհաջողություն», ալլև խեթ. arpu- «դժվարություն ունենալ(?)», անվճռական լինել(?)», arpuatar «դժվարություն», arpuuant- «դժվարին, անբարենպաստ», լուվ. arpuuan(n)i- «դժբախտ» — հայ. ողբ.-ուլ(?)¹⁸.

խեթ. nepiš- «երկինք» — հայ. ամբ, ամպ, -ոյ (-պ-ի երկրորդական խլացում ս-ի մոտ) .

խեթ. dai-, tai- (tehhī «դնում եմ»), լուվ. duua-, հիեր. խեթ. tu(ya)-, լիկ. ta-, tuwe- «դնել», լիդ. cuve- «կառուցել», ca- «նվիրել» — հայ. դնեմ. խեթ. kuen- «խփել, սպանել» — հայ. զան, -ի, -բց, ջնեմ, ջնջեմ:

2) Հ.-հ. b, d, g, g^u.

խեթ. da-, հիեր. խեթ. ta- «վերցնել»¹⁹, լիդ. dā- «տալ» — հայ. տամ.

լիդ. tam- «կառուցել(?)»²⁰ — հայ. տուն²¹.

խեթ. taru- «փախտ» — ալուգալ «զղալ», ալամ «ամուր».

լուվ. tup(a)i- [dup(a)i-], հիեր. խեթ. tupi-, լիկ. tub(e)i- «խփել» — հայ. տոփեմ (բրրո. սփել) «ծեծել, սպիտակեղենը փայտով ծեծել, կոխել»²².

tūya- «հետու» — հայ. տեմ, ալլև երկար, երկայն.

խեթ. šiuatt- «օր», šiu-, šiuñ-, šiuñi-, šiuann-, šiuanni- «աստված», պալ. Tiāz «արևի աստված, արև», լուվ. Tiwaz «արևի աստված, արև, օր», լիդ. civ- «աստված»²³, թերևս ՇԻ «օրը(?)»²⁴ — հայ. տիւ.

խեթ. ed-, ad-, պալ., հիեր. խեթ. at-, լուվ. az- «ուտել» — հայ. ուտեմ.

խեթ. hatuki- «սարսափելի» — հայ. ատեամ²⁵.

galaktar «մեղմացում(?) կամ թարմացում(?)», քաղցր բան, քաղց-րավիհիք(?)», «հաճելի, քաղցր ուտելիք՝ բուսական ծագմամբ(?)» (*galakt «կաթ») — հայ. կալսն (բրրո. կալսց, կախս <*կաղց).

հիեր. խեթ. yašaš «եղ» — հայ. կով(?)²⁶:

¹⁸ Եթե ճիշտ է խեթ. բառերի ստուգաբանությունը է. Հարոշը («Revue hittite et asianique», 16, էջ 98) համեմատում է լիկ. erbbe «անկում» բառի հետ:

¹⁹ Խեթ. բառը բխեցնում են նաև հ.-հ. *dhe- «դնել» արմատից, որտեղից հյ. դնեմ:

²⁰ Արմատը ենթադրվում է և հիեր. խեթերենում: Հմտ. հ.-հ. *dem- «կառուցել» արմատի հետ կապված *demə- «սանձել, զսպել», որից խեթ. dantaš- «ճնշել, նեղել», լուվ. damaš- «խշխշել»:

²¹ Հմտ. և տալուտէո. տամալիս:

²² Հ.-հ. *depli- «տորոել, կոխել, ճմռել, խփել»: հայ. դոփեմ բառը թերևս փոխառություն է: Տոփեմ բայը հ. Աճառյանը (հայ. արմ. բառ., 2, էջ 1273—1276) բխեցնում է (s)teb- «սյուն, ամրացնել, տորոել, ճզմել» արմատից:

²³ Հ. Կրոնասերը («Die Sprache», 5, 1959, էջ 55 և 56) խեթ. šiu(ni)-ն համարում է ոչ հ.-հ. ծագման (հմտ. խուռ. šimigi, ուրարտ. šiuñi—արևի աստված):

²⁴ Այս զեպրում հմտ. ուրարտ. šali «օր»:

²⁵ Հմտ. նաև լուվ. adduuali-, հիեր. խեթ. atuuara-, ալլև թերևս խեթ. idaiu- «չար»(?) . Ի. Գուլումանին սրանց է միացնում և լիդ. c-itolla- (c-itāla-) «չար»(?) բառը՝ c-ն թողնել-լով անբացատրելի:

²⁶ Ստուգաբանությունը հնարավոր է, եթե հիեր. խեթ. համար ենթադրենք օս >(h)u անցում:

3) Հ.-ե. p, t, k, k^h և ph, th, kh, k^hh.

խեթ. pahhur (pahhuvar), լուվ. pahur «կրակ» — հայ. հուր,-ոյ.

խեթ. pahš- «պաշտպանել», թերեւ նաև լիզ. fa-a- «պաշտպանութիւն» — հայ. հաւրան ճոտ (այծի, ոչխարի)՝ *(pa-tro-), -ւ (noh-ւ «ոչխարա-պահ» բառում).

խեթ. palhi- «լալն» — հայ. լայն, ալլև հող.

խեթ. papparš- «սրսկել, ցողել, ոռոգել» — հայ. փռնւմ, սփռնւմ²⁷.

խեթ. parā «առաջ, դուրս, հեռու, -ից», piran «առաջ, առջև», pariya(n) «միջով, դէնը, այն կողմը», լուվ. parran «առաջ, դուրս» — հայ. առ.

խեթ. parh- «հալածել, քշել» — հայ. հորդ «կոխած, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ», հորդիմ «ղնալ, տարածվել».

խեթ. pata-, լուվ. pati-, հիեր. խեթ. pat(a?)- «տք», լիկ. pededi «հետիոտն, ոտքով» — հայ. ուն, ոտք, հեա, -ոյ.

խեթ. piddāi- «վազել, շտապել, թռչել (?)», խուսափել, pattar, -anaš «թև» — հայ. քիռ, քոչեմ, քեր, քերք.

լիկ. epī «դեպի, առ»²⁸ — հայ. և.

խեթ. ep(p)-, ap(p)- «բռնել, որսալ, դրավել» — հայ. ունիմ (*oṛ-n-?).

խեթ. happinahi- «հարստացնել», happinant-, լուվ. hapina- «հարուստ» — հայ. աւն «սեփականութիւն, ունեցվածք».

խեթ. išpai- «հագնալ, կուշտ ուտել» — հայ. փարթամ²⁹.

խեթ. (DUG)iš-pandu(ya)- «փոքրիկ աման (մետաղյա)» [(DUG)išpanduz-zī-?] — հայ. փունդ «մի տեսակ աման կամ չափ»³⁰.

խեթ. išpar- «տարածել» — հայ. սփռել, փռել, սփիռ, սփիւռ.

խեթ. išpart- «բարձրանալ, դիմանալ, հաղթահարել, մաղապուրծ լինել, փրկվել» — հայ. սպրդել «սողոսկել, ծածուկ մտնել», սպրդիլ «վրիպել, ձեռքից սահել» փախչել, նոր-նախիջ. բրբու. սոսոռոռու «սահել, աղաւթել, ձեռքից սպրդել, աչքից վրիպել»³¹.

խեթ. išpatar «տեղ, նիզակ» — հայ. փայտ³².

²⁷ Խեթ. բառը ծագում է *pers-ից, հայերէն բառերը՝ այդ արմատի *spher-s-, *phier-s- տարբերակներից:

²⁸ Այլև թերեւ խեթ., լուվ. appa(n) «հետո, ետ, նորից», հիեր. խեթ. apan, լիկ. epū «հետո», եթե խեթ. appa-ի և մյուսների մեջ իրոր համընկել են հ.-ե. *enl-ն և *apo-ն (հայ. և <*epī), Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը հայ. ապտ-ն հնարավոր են համարում կապել խեթ. appa-ի հետ:

²⁹ Կապը խիստ հեռավոր է (միայն արմատային)՝ հ.-ե. *(s)p(h)er(n)- «բարդազանգաւ, անել, ընդարձակվել, հաջողութիւն ունենալ»:

³⁰ Եթե խեթ. բառը կապված չէ šipand- «ղոհել, զոհաբերել» բայի հետ (ինչպես կարծում է Զոմերը), այլ հայ. բառի հետ միասին ծագում է հ.-ե. *(s)ph(o)ndho- «փայտեղույլ, աման» նախաձեռնից, որ վերջին հաջով կապված է *sphe-, spnə- «երկար, տափակ փայտի կտոր» արմատի հետ:

³¹ Եթե կարելի է հանդէսնել հ.-ե. *sp(h)erd(h)-ին «ղողալ, ցատկել», որից հին իսլ. spreitta «բարձրանալ, ելնել, վեր ցատկել, ծաղկել», պատճ. կ. «փրկել, ազատել, բաժանել» և այլն: Կապ չունենալ արդյոք խեթ. բայի հետ հայ. վրթանիմ, վրծանիմ, պրծանիմ, պուրծ, բբբ. փրցնել բայերը, որոնք սովորաբար կապում են ապուր, ապրել ձևերի հետ: Միջ հաճանական է խեթ. parkunu- «մաքրել, անմեղացնել, ազատել, փրկել» բայի հետ կապել հայ. փրկեմ բայը, որ Հյուբշմանը համարում է ասորերէնից:

³² Եթե խեթ. բառը իրոր բխում է *sp(h)e-, sp(h)ə-dh- «երկար, տափակ փայտի կտոր», իսկ հայերէնը՝ սրան մերձավոր *(s)p(h)ēl-/(s)p(h)ē- «սոսր, սուր փայտի կտոր» արմատից:

խեթ. šipand- (šippand-) «զոհել, զոհաբերել» — հայ. սպանդ, -ի, -ից «զոհ, մատաղ»³³.

խեթ. ta «ե», լիկ. te «այստեղ, աստ» — հայ. դա, այդ, դոյն, -դ (հ.-ե. լ-ի դիրքային ձայնեղացում), ալլե բե, երե.

խեթ. dala-, dališa- «թողնել» — հայ. բողոմ (հ.-ե. tel- «բարձրացնել, տանել, կրել»).

խեթ. tar- «ասել» — հայ. ըն-քեռնուլ, քրքրուկ (*քուքրուլակ < *tör-tör-o-) «ճարտարախոս».

խեթ. teri- «երեք», լիկ. trisnni «երեք անգամ» — հայ. երեք.

խեթ. tuk, tukka «քեղ», պալ. ti «զու(?)», tu «քեղ(?)», հեր. խեթ-tuqa- «քո» — հայ. դու (հ.-ե. լ-ի դիրքային ձայնեղացում).

լուվ. dūr- «մեղ» — հայ. քորեմ, քարախ³⁴.

խեթ. aštira- «ասող(?)» — հայ. ասող³⁵.

լիկ. statti «դնում է, կանդնեցնում է» — հայ. ստանամ.

խեթ. halija- «ծնկի դալ» — հայ. խեղ(?).

խեթ. kalleš- (kalliš-) «կանչել», թերևս նաև kallikalli- «բաղե» և halzai- լուվ. halt(a)- «կանչել, կոչել» — հայ. արաղաղ.

խեթ. karš- karšiša- «հատել, կտրել, անջատել, հաշմել», kartāi- «հատել, կտրել, կտրել-հանել»³⁶, պալ., լուվ. karš- «հատել, կտրել(?)», թերևս նաև լիդ. fa-karse- «քանդել» — հայ. քերեմ, քերքեմ, քերծեմ.

լիդ. kave- «քուրմ», ko- «հրապարակել, հայտնի դարձնել(?)» [թե «լսել(?)»] — հայ. ցոյց, ցուցանեմ³⁷.

խեթ., պալ., լուվ. kuš «ով», խեթ., պալ. kuut «ինչ», խեթ. kuūt «քանի որ, որովհետև, դի», kuuat «ինչպես» kuuatta(n) «ուր», պալ. kāt (< kuuāt) «որովհետև(?)», լուվ. kuuatti(n) «ինչպես(?)», հեր. խեթ. kua(?) — հարար, դերանուն, kuatan (?) «որտեղ», լիկ. -ke «ինչ որ» (ti-ke «ինչ որ մեկը»), լիդ. -k «ինչ որ» (pis-k «ինչ որ մեկը»), kot «ինչպես» kud(-) «ուր», qe-, qi- «որը» — հայ. ո (ո-ք), ոլ, ի (զ-ի, ի-նչ, ի-ք, ի-մն), ուր, -չ (իմ-չ)³⁸.

խեթ. har-, hark- «պահել, ունենալ» — հայ. արգել-ք, արգելում.

խեթ. iskalai «պատռել, ճղել, ճկղքել, պոկել(?)» — հայ. ցլում.

խեթ. isgar- «ծակել, խոթել» (*sker-) — հայ. քերել, քորել (*ker-, *kor-) (?).

խեթ. šakkar, zakkar (r/n-ով հիմք) «կեղտ, աղբ, կղկղանք» — հայ. ցեռ (*ցեռնի):

³³ Իթե հայ. բառը նույնպես ծագում է հ.-ե. *spend- արմատից (դ < m' li-ի մոտ) և ոչ թե սպանման բայից, ինչպես կարծում են Լ. Մեյեն և Հ. Լեհմայանը:

³⁴ Իթե լուվ. բառը զուգահեռ չէ խեթ. šeḫur--ին և եթե այն կարելի է բեկցնել հ.-ե. *(s)ter- «անմաքուր հեղուկ, կեղտ, զոմագր» արմատից:

³⁵ Իթե խեթ. բառը ճիշտ է վերականգնվում:

³⁶ Kuer-, kur- «կտրել, հատել» բայը u-ի պատճառով ավելի հակված են բեկցնելու հ.-ե. *kuer- «անել, կազմել, կերպարանել» արմատից, քան (s)ker- «կտրել» արմատից, որից ծագում են վերևում բերված բառերը:

³⁷ Հ.-ե. *(s)keu- «ուշադրություն դարձնել, նայել» արմատից:

³⁸ Հ.-ե. *k^uo-, *k^ue-, *k^uei-, *k^uu- և այլն: Լեյս արմատի հետ կապված է *k^ue «և, ինչ որ» արմատը, որից լիդ. k(-) «և» (թերևս նաև միլ. -ce, լիկ. -ce «պե, որ» և հայ. -ք (ո-ք, ի-ք), -չ (ո-չ)):

³⁹ Ըստ ոմանց նաև ճեղքեմ (*kel-kh-?), քեղի:

4) Հ.-Լ. g'h, g', k', k'h(?).

խեթ. keššera-, keššar-, լուվ. iššari-, išri- «ձևոք», լիկ. izre «ձևոք(?)» — հայ. ձեռն, հօն. ձեռք, -աց.

խեթ. gim- (gem-), gimmant- (gimmant-) «ձմեռ» — հայ. ձմեռն.

խեթ. genu- (ginu-) «ծունկ» — հայ. ձուկ, ձուկն.

խեթ. harki- «սպիտակ, լուսավոր» — հայ. արծար, արծնեմ.

խեթ. iuga- «լուծ» — հայ. լուծ⁴⁰.

խեթ. uk, ug(g)a «Լուս» — հայ. Լուս.

խեթ. ka-, ki- «այս», ալիկ. պալ. kiat «այստեղ» (?), kāt «այս պատճառով, ուստի» — հայ. սա, այս, այն, -ս.

karauar «Եղջյուրներ», haršan(a?) «գլուխ», haršar «գլուխ» (?), լուվ. har-šan- «գլուխ» — հայ. սար.

խեթ. kard- (kardi-), պալ. kart- «սիրտ» — հայ. սիրտ, -ի, -ից.

խեթ. aku- «սրածայր քար, խութ, ժայռ» — հայ. ակնի:

5) Հ.-Լ. s.

լիկ. senñahije «ավելի ծեր» — հայ. հին.

խեթ. šepa(m?) «լոթ» (šiptamiša = VII-miša) — հայ. Եւրն.

խեթ. šup- «քնել» — հայ. քուն, -ոյ (*suop-no-).

խեթ. zamangar (zamakur) «մորուք» — հայ. մաւրուք, մորուք.

խեթ. eš-, aš-, պալ., լուվ., հիեր. խեթ. aš- «լինել», լիկ. essti «է» (թե՞ «դնում է»), esste «էր» — հայ. եմ (*es-mi).

խեթ. ešhar «արյուն» — հայ. արիւն.

խեթ. haštāi- «ոսկր. ոսկերք, կմախք», լուվ. hašša- «ոսկր» — հայ. ոսկր (*ost-uer կամ ost-ko-).

խեթ. hašduir- «ցախ» — հայ. ուտ, -ոյ:

6) Հ.-Լ. r⁴¹, l, m, n.

խեթ. ar- (er-) «զալ, հասնել», ar- «կանգնել, կանգ առնել», arnu- «շարժել, հեռացնել, հեռու տանել, մոտեցնել, մոտ բերել» — հայ. յարնեմ, արի⁴².

խեթ. arra- «հետույք, նստատեղ» — հայ. ու, -ոյ.

խեթ. arš- «հոսել», aršanija- «նախանձել. բարկանալ»⁴³, haršalant- «բարկացած», լուվ. aršija- «հոսել(?)», haršala- «բարկութուն» — հայ. հեռ (*մմա. և խեռ), եռամ, զ-եռամ.

լիկ. arvo- «լուրացնել(?)» — հայ. առնում⁴⁴.

խեթ. hartagga- «գիշատիչ կենդանի՝ արջ(?)» — հայ. արջ, -ոյ.

խեթ. lah(h)uṣai-, lah(h)u- «թափել, լցնել» — հայ. լոգանամ.

խեթ. luk(k)- «լուսանալ», lukkai- «վառել», պալ. lukk- «վառել», ալիկ. թերևս լուվ. luha- «լուլս(?)» — հայ. լոյս, -ոյ, լուցանեմ.

⁴⁰ Հայ. լ-ն լուծանեմ բայի ազդեցությամբ (կան նաև այլ մեկնարանություններ):

⁴¹ Ե՛վ խեթերենում, և՛ հայերենում բառակազմում է չի հանդիպում:

⁴² Սակայն ոմանք խեթ. arnu- բայը համեմատում են հայ. առնում, հուն. ἀρνύω «վաստակել, ձեռք բերել, ստանալ» բայերի հետ (Հ.-Լ. *ar- բաժին հանել, յուրացնել):

⁴³ Aršanler ձեր նշված է երկու թեք բեկանչանով որպես փոխառյալ:

⁴⁴ Լիկ. բայի ստուգաբանությունը հեղինակինն է:

խեթ. NINDA⁴⁵laddari, aladdari (մի թխվածք) — հայ. աղանձ թխարկած ցորեն, աղանձանիլ թայրվել, խարկվել, այլև թերևս աղանդեր թղեսկում⁴⁵։
լիդ. aḷa- ռուրիչը, aḷida-d- փոփոխություն(?)⁴⁶, այլև թերևս aḷē[o] փոփոխվել(?)⁴⁷ — հայ. այլ, աղաւաղ⁴⁸։

խեթ. alpa- ժամպ (*սպիտակ) — հայ. աղաւնի (*սպիտակ), ալաւ- (ս)ունք համաստեղություն, բուլլ⁴⁹։

խեթ. malla- ժաղալ, mališku- թթուլ — հայ. մալեմ, մա-մուլ, մլ-աղաց, մլ-ուկն փայտոջիլ, մլմլեմ, մեղ-կ, մեղ-մ, մղմող ցեղաց⁵⁰։

խեթ. mald- ժողվել — հայ. մաղրեմ⁵¹։

խեթ. marrija- փշրել(?), մանրել(?)⁵², պալ. marešša- փշրել, մանրել — հայ. մաշեմ (<*մարշեմ), մարտ ժողով, մուրն⁵³։

խեթ. mekki- ժշատ (մեծ) — հայ. մեծ, -ի, աց⁵⁴։

խեթ. mer- (mir-) ժանհետանալ, կորչել, մահանալ — հայ. մեռանիմ⁵⁵։

խեթ. milit-, պալ. malit-, լուվ. mallit- ժմեղր, պալ. malit- ժմեղր(?)⁵⁶ — հայ. մեղր,-ու⁵⁷։

խեթ. nata- (natı-) ժղեղ, նետ — հայ. նետ, ի, -ից⁵⁸։

խեթ. neya- ժնոր, թարմ — հայ. նոր,-ոյ⁵⁹։

լիդ. nu[...] ժինը — հայ. ինն⁶⁰։

խեթ. anniš ժայն — հայ. նա, այն, նոյն, -ն⁶¹։

խեթ. anda(n), պալ. anta, լուվ. anda, հիեր. խեթ. a(n)ta, լիդ. nte ժմեջ, ēn, ān ժմեջ — հայ. ի, ըն, ն (լատինարան տեքստերում)⁶²։

խեթ. anturija- (andurija-) ժներքին, andurza ժներսում — հայ. ըն-դեր-ք⁶³։

խեթ. hant- ժառանգամաս, ճակատ, hanza ժառանգ, hantezzi- ժառա-ջին, առջևի, լուվ. hantili- ժառանգին — հայ. անդ, ընդ⁶⁴։

խեթ. innara- ժուժ(?)⁶⁵, innarauant-, լուվ. annarummi ժուժիկ — հայ. այր, առնական, արի⁶⁶։

շ) Հ.-հ. u⁶⁷։

խեթ. huek- (huik-, huk-) ժերդվել — հայ. զոչեմ(?)⁶⁸։

խեթ. huis- (hueš-) ժապրել, փրկվել, huisuatar, լուվ. huituatali- ժկյանք — հայ. զոմ (զոս, զոյ), զոյ, -ի, -ից⁶⁹։

խեթ. hulaliia- ժիաթաթել, լուվ. ualip- ժիաթաթել, ծրարել — հայ. զելում ժողորել, զալար, զիլ, զլոբեմ, զադն, զեղն ժպատատուկ, բաղեղ⁷⁰։

խեթ. *hulana- (*hulani-), լուվ. *hulani- ժբուրդ, զեղմ — հայ. զեղմն⁷¹։

խեթ. utne- ժկետին — հայ. զետին⁷²։

⁴⁵ Հայ. աղանձ բառը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 7, էջ 79) համեմատում է սեսկր. randu- «նիկ, կերակուր պատրաստել», հին պրուս. landan «կերակուր» և այլ բառերի հետ՝ բխեցնելով *lndh- արմատից (չունի Պոկոտին), ըստ Հ. Աճառյանի՝ հայերենից են վրաց. լանձ- վի «տապակ, կասկարա», լանձվա «մի բիշ այրել՝ խորովել»։ Խեթ. բառի և հայ. աղանդեր-ի համեմատությունը պատկանում է Դ. Ղափանցյանին։

⁴⁶ Հմմտ. և աղնատ (?)⁴⁷։

⁴⁷ Հ.-հ. meidun-ը գիմաց հայ. մաղր ձևի առկայությունը հիմք է տալիս ենթադրե-լու հայերեն բառի՝ փոխառյալ կամ dh-ի՝ աճական լինելը (*mel-dh-, *mel-ih-)։

⁴⁸ Համապատասխանություն կա, եթե անտոլիական բառերի մեջ առկա է Հ.-հ. en-ը «մեջ»։

⁴⁹ Հ.-հ. *aner- (*Hner-) արմատից. հմմտ. A. K a m m e n h u b e r. Zur Stellung des Hethitisch-Luvischen Innerhalb der idg. Sprachen, KZ, 77, 1/2, 1961, էջ 38։

⁵⁰ Հ.-հ. բառասկզբնային i-ի համար հավաստի զուգահեռներ չկան։

⁵¹ Ըստ Ա. Գյոցեի և Հ. Պեդերսենի (Mursiliš Sprachlähmung, 79 և 59), հասկածելի է։

խեթ. *uaš-* «գնել, ձեռք բերել», *uešila-* «գին» — հայ. գին, -ոյ (**ues-no-*).
 խեթ. *uaš(š)-* [*ueš(š)-*], *uaššila-*, լուվ. *uaš(š)-* «հագցնել, հագնել» — հայ. գ-գետ, բրբռ. գետ.

խեթ. *uiian(a-?)*, լուվ. *uiniiant-*, հիեր. խեթ. *ua(l)ana-* [*uaana-s*] «գինի» — հայ. գինի⁵².

խեթ. *uitt-* (**uett-*), լուվ. *ušša/l-*, հիեր. խեթ. *usa-* «տարի» — հայ. (հեր)ու (**per-ut-i*) «(անցյալ) տարի»:

8. Հ.-Ե. *ei-/l-*

խեթ. *iša-* «գնալ, քայլել», *it* «գնա՛», *itten* «գնացե՛ք» — հայ. Էջ, իջանք:

§ 13. Հայերենի և խեթա-լուվական լեզուների ծագումնալին ընդհանրությունների քննությունը ավարտենք մի շարք այլ զուգահեռների մատնանշումով.

1) Կան բնաձայնական ծագում ունեցող մի շարք զուգահեռներ, որոնց ծագումնալին կապը կասկածներ է հարուցում.

խեթ. *alalam(m)a-* (*alalima-*) «աղմուկ(?) կարկաչ(?)» (ափելի համանական է համարվում «ղետից անցկացվող խրամ, ջրանցքի ճյուղավորում» իմաստը — *ակկադ. haṭidu*, այն է՝ *haṭṭitu?*) — հայ. աղմուկ (հ.-Ե. *el-, ol-*)⁵³.

խեթ. *ḫaḫharš-* «ծիծաղել» — հայ. խախար⁵⁴.

խեթ. *ḫapupi-* (*MUŠEN*) (մի թռչուն) — հայ. հոպուպ⁵⁵.

խեթ. *kakkapa-* «կաքավ(?)» — հայ. կաքալ⁵⁶.

խեթ. *uuai-* «ցավ, վիշտ. դժվարություն» — հայ. վայ.

խեթ. *uḫai-* «գոռալ, բառաչել» — հայ. զայլ⁵⁷.

2) Կան այլ կարգի մի շարք զուգահեռներ, որոնց մեջ հայկական կամ խեթա-լուվական ձևերի, երբեմն էլ և՛ առաջինների, և՛ երկրորդների բնիկ լինելը կասկածելի է, հաճախ էլ չի հաստատվում ձայնավորման բնույթով.

խեթ. *handaiš-* «ջերմություն, տաքություն», *ḫantiḫai-* «հոգալ, խնամել» — հայ. իանդ, իանձ, իանդադատիմ⁵⁸.

խեթ. *ḫattāi-* «ծակել, կտրել, հատել», այլև *ḫattarāi-* «խաչավոր(վ)ել», *ḫatk-* «(դուր) փակել», *ḫatkešnu-* (*ḫatkiššanu-*) «ճնշել», *ḫazziḫa-* «ծակել, զիպցնել», *ḫazzik(k)-* «զարնել, նվաղել» — հայ. խայք, խայքել, այլև խորել, ինքել, ինքիկել, իիք, իաչ, իաչել, իոչ⁵⁹.

⁵² Հնարավոր է, սակայն, որ հին անատ. և հայ. բառերը բնիկ չեն, այլ փոխառյալ:

⁵³ Համեմատությունը պատկանում է Գ. Ղափանցյանին, որ հենվում է խեթ. բառի հնում տրվող «փախ, երկյուղ» իմաստի վրա: Հայ. բառը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ. 1, էջ 155) համեմատում է հուն. *πολεμαος* «կռիվ, վեճ» բառի հետ:

⁵⁴ խեթ. բառի պատկանելիությունը հ.-Ե. **kha kha* բնաձայնական արմատին կասկածելի է:

⁵⁵ Եթե խեթ. բառն ունի «հոպուպ» իմաստը:

⁵⁶ Հ.-Ե. **kakk-* բնաձայնական արմատի տակ բերվող հուն. *κακαχ* «կաքավ» բառը զուգահեռներ ունի կովկասյան և սեմական լեզուներում. Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1113—1114) հակված է հայ. բառը բխցնելու ասորերենից:

⁵⁷ Եթե խեթ. *uuai-* «վիշտ» բառի հետ միասին պատկանում է հ.-Ե. **uai-* «վայ, ավաղ» բնաձայնական արմատին և եթե ճիշտ է հայ. բառի տվյալ ստուգաբանությունը:

⁵⁸ Հմմտ. հ.-Ե. (s)*kand-* «լուսավորել, վառվել»:

⁵⁹ Ո՛չ հայերենի խոք, խեք, խաչ, խոչ ձևերի, ո՛չ էլ խեթերենի ձևերի ձայնավորումը չի համապատասխանում հ.-Ե. մյուս լեզուների ձևերի և խայք-ի ձայնավորմանը՝ հ.-Ե. *(s)*kai-*, -ի-, -ու- «բիել, հարվածել, բռնաբանել» արմատից: Հ. Աճառյանը, նշելով հայերեն բառերի կաղը, չի բացատրում ձայնավորման բնույթը:

խեթ. (E)hila- «բակ. փարախ. զոմ» — հայ. իուղ (հիւղ, հիղ, հնղ, ոուղ ձեւերի կողքին)⁶⁰.

խեթ. zena- «աշուն» — հայ. աշուն⁶¹;

3) Դան մի քանի զուգադիպումներ, որոնց հնդեվրոպական միասնական ծագումը չի ապացուցված, բայց որոնց մեջ առկա է խեթ. ž — հայ. հ (հ.-և. s) համապատասխանությունը.

խեթ. šalpa- (šalpi-) «(շան) կղկղանք» — հայ. աղբ⁶².

խեթ. šamana- «հիմնաքար. հիմք» — հայ. հիմն, -ան.

խեթ. šannapileš «դատարկվել, պարպկել», šannapili- «դատարկ. մի-ախնակ»⁶³ — հայ. հանձմ.

4) Մի շարք բառերի զեպում խեթական և հիեր. խեթ. բառերի մեջ ž, š շփականների առկայությունը ոմանք բացատրում են որպես հաճորդ Ա-ի ազդեցությամբ նախնական կոկորդալիների քմայնացման արդյունք, մյուսները այդ բառերը համարում են փոխառություններ (ավելի հավանական է երկրորդ կարծիքը).

հիեր. խեթ. ašua- «ծի» (հմտ. հ. հնդկ. aśva-?) — հայ. էշ.

խեթ. šuppi- «մաքուր» (հմտ. հ. հնդկ. śubha- «զեղեցիկ, հաճելի», subhra- «զեղեցիկ, փայլուն») — հայ. սուրբ, -ոյ

հիեր. խեթ. šurna- «եղջյուր(?)» — հայ. սար «ծալր, գլուխ. դադաթ. լեռան դադաթ, լեռ».

հիեր. խեթ. šuana- «շուն(?)» — հայ. շուն⁶⁴,

§ 14. Հայ-խեթա-լուվական բառային զուգաբանությունների ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություններին:

1) Զուգադիպումների առաջին խումբը կազմում են այն միավորները, որոնք բնութագրվում են հիմքակազմության, արմատի ձայնավորման, «հավելվածային» նախաձայնավորի և հնագույն (նախահնդեվրոպական) կոկորդալիների ընդհանրությամբ: Սրանց թիվը մեկ տասնյակից պակաս է:

2) Երկրորդ խումբը կազմում են այն միավորները, որոնց ծագումնաբանական կապը բնորոշվում է գերազանցապես արմատական ընդհանրությամբ: Սրանց թիվը հարյուրից անցնում է:

3) Բառային զուգաձեւերը չեն խոսում հնդեվրոպական միասնության շրջանում հայ-խեթա-լուվական բարբառային մերձավորության մասին: Ո՛չ քանակով, ո՛չ էլ ընդհանրության բնույթով դրանք չեն կարող համեմատվել հայ-հնդ-իրանական և հայ-հունական զուգաձեւերի հետ:

⁶⁰ հ.-և. *(s)k(h)eu- «ծածկել, փաթաթել, վարազուրել»: խեթ. բառի ձայնավորումը բացատրելի չէ: Համեմատությունը պատկանում է Գ. Ղափանցյանին:

⁶¹ հ.-և. *es-en-, *os-en- (ռուս. осен) նախաձեւերի զեպում: խեթ. բառի ստուգաբանությունը կասկածելի է, հայերենի շ-ի առկայությունը՝ անբացատրելի (կողմնակի հ.-և. շե՛րտ):

⁶² Սովորաբար կամ բխեցնում են հ.-և. *[-bh-o-]-ից (*el «մզլել, հոտել, փտել»), կամ համարում կովկասյան փոխառություն (Ղ. Աճառյան, Հայ. արմ. բառ., 3, էջ 131):

⁶³ Կապված չէ՝ արդյոք šanḫ- «փնտրել, որոնել, ձգտել, պահանջել, ավելի, մաքրել» բայի հետ, որը բխեցնում են հ.-և. *sen- «պատվաստել, ավարտել» արմատից: Հմտ. և խեթ. ḫan- «դատարկել, ջուրը հանել»:

⁶⁴ Եթե հիեր. խեթ. բառի «շուն» իմաստը ճիշտ է (հնարավոր է և «խոզ» իմաստը):

ГЕНЕТИЧЕСКИЕ СОВПАДЕНИЯ СЛОВАРНОГО СОСТАВА
АРМЯНСКОГО И ХЕТТО-ЛУВИЙСКИХ ЯЗЫКОВ

Проф. Г. Б. ДЖАУКЯН

(Р е з ю м е)

Статья посвящена изучению армяно-хетто-лувийских лексических изоглосс. Автор выделяет две группы генетических совпадений в области лексики. Совпадения первой группы характеризуются общностью таких черт, как тип образования основы, огласовка корня, наличие протетического гласного, сохранение протоиндоевропейских ларингальных. Число этих совпадений не превышает одного десятка. Основная же масса лексических изоглосс (их число больше одной сотни) характеризуется лишь генетической общностью первичных корней.

По своему значению и количеству армяно-хетто-лувийские лексические изоглоссы намного уступают армяно-индоиранским и армяно-греческим изоглоссам. Они указывают на отсутствие близких диалектных связей между прототипами армянского и хетто-лувийских языков в период индоевропейской общности.